




ՏՆՈՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻՍԻՐ

Նամակ կամ ուր եւ է գրութիւն  
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ  
Պապար Մուրուր, ԳԱՅԻՐԷ

Direction du journal PAROS  
Bazar Mourour, CAIRE Egypte

Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրապատճիւն սեղմ. ողջ դի. 80  
» » վեցամսեայ » 50  
Օսար եւ լիւրեր տարեկան ֆրանկ 25  
» » վեցամսեայ » 14  
Թղթատարի ծախքը խմբ. պրու-  
քեան վրայ է :

Խմբագրութեանն ուղղութեամբ նա-  
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՏԱՐԻՆ ԶԻ ԲՈԼՈՐՈՒԱԾ

Տագնապի ու անձկութեան օրերը վեր-  
սկսան: Ուժանակը — կամ՝ իր միջազգա-  
յին բացատրութեամբ՝ ճիւղաւորը — նորէն  
պայթեցաւ Պոլսոյ վտղոցներուն մէջ, ընդհա-  
նուր տարածի սիւներով մայրաքաղաքի ժողո-  
վորդին և մասնաւորապէս հայերուն ու  
ընդհանրապէս իսկ շարժում: Դժուար է  
սակայն այժմէն և հեռուէն հաստատ համո-  
զում մը գոյացնել այս մասին, ու պիտի չա-  
տանանք, Եգիպտոսի բոլոր թերթերուն պէս,  
հետեւելով հեռագրական գործակալութեան  
մը կցկալուր լուրին, որ կըսէր թէ «գործին  
մէջ մասն ունեցող երեք հոգիները, որոնք ձեռ-  
բակաւորեցան, հոյ են»: Սուրհանդակը պիտի  
բերէ անշուշտ ճիշդ ու մանրամասն տեղեկու-  
թիւններ:

Թուրքապարսկական սահմանադրութեան  
հասած արձագանքները՝ մէկ կողմէն, ու Պոլ-  
սոյ մէջ հայերու ձեռքադրութեանց վերսկսու-  
մը՝ միւս կողմէն, երկուսն ալ բնազդաւորեցին  
պատճառէն շարժումներէ ի վեր. յոռետե-  
սութիւնը պաշարած էր միաբերը, անցեալ  
տխուր դէպքերուն յիշատակովը սաստկացած:  
Քաղաքագէտ ըլլալու պէտք չի կար՝ գուշա-  
կելու համար թէ հայերու կողմէ յիշատակա-  
կան ցոյց մը կամ փորձ մը ինչ աղետալի հե-  
տեւանք կրնայ ունենալ հայերուն համար. ինչ,  
տարին չի բոլորուած պէտք էր որ նորէն հա-  
լածուէինք ու շարժուէինք. և եթէ Պոլսոյ մէջ  
այս երկուսը կայ, հապա գաւառները: Նոյն  
իսկ եւրոպական ամենէն լուրջ թերթերը հրա-  
պարակաւ խորհուրդ կուտային զգուշանալ ա-  
սանկ վտանգաւոր ձեռնարկութեան մը:

Այս պայմաններու մէջ, ինչպէս հաւա-  
տանք թէ կրնան գտնուիլ հայեր որոնք ազ-  
գասիրական գործ համարին ռումբ և ուժա-  
նակ պայթեցնելը:

Ուրիշ ենթադրութեան մը նայելով, ու  
ընդհանրապէս կուտան տեղական եւրոպա-  
կան մէկ քանի թերթեր, անկարելի չէ՝ որ  
նոյն իսկ թուրքերը իրենք կազմակերպած ըլ-  
լան այս տեսակ ցոյց մը, քաղաքական կամ  
կոտորածային նպատակներով:

Ամեն պարագայի մէջ, ահաբեկի ճգնա-  
ժամ մը կանցունեն այս պահուստ Պոլսոյ քրիս-  
տոնեայ ժողովուրդներն ընդհանրապէս, ու  
մեր ազգակիցները մասնաւորապէս: Այն թը-

ւակներն ուր դեռ անհանգիստ են ձայնը կրնար  
դեռ սկսար ազդեցութիւն մը ունենալ Դրան  
մօտ և ուր թուրք կառավարութիւնն ու ժո-  
ղովուրդը նուազ զօրաւոր կը համարէին ինք-  
զինքնին քան հիմակ, տեսանք թէ առաջին-  
ներն անգործ եղան վերջիններուն կատարու-  
թեան դէմ թուաբար կանգնալու և պաշտոնա-  
կան սպառնալիքներ չի բաւեցին, բնականա-  
բար, արդիւնքը հազարաւոր հայերու շարժը  
մայրաքաղաքին մէջ: Իսկ այսօր: Շատ իրա-  
ւամբ կը գրէ պաշտօնակից մը թէ «Կ. Պոլսոյ  
մէջ ամենէն աւելի փոխ ազդող պայթումները  
ճիւղաւորի պայթումները չեն — իրական կամ  
ոտոխկանական — այլ իր կրօնային կարծուած  
մեղադրութեան պայթումը, կամ աւելի  
յոռուակ խօսելով, այն որ կարտայայտուի ա-  
ւարաւորութեամբ ու վայրագ շահատակութիւն-  
ներով, զոր քաղաքակիրթ եւրոպան թողուց  
որ կատարուի, երկու տարիէ ի վեր, Անա-  
տոլի մեծագոյն մասին մէջ, և որուն կըրկ-  
նումին կը հանդուրժէ տակաւին պարանեան  
թերակզղի մէկ մասին մէջ»:

Առանց աւելի առաջ երթալու այս յո-  
ռետեան նկատողութիւններուն մէջ, որոնք ճշ-  
մարտութեան հետ չեն դժբաղդաբար, կը  
շատանանք հրատարակելով Կ. Պոլսէն եկած  
հեռագրերը մեր Բ. էջին մէջ: Առաջին լուրն,  
ինչպէս կը յիշուի, իմացուեցաւ հինգշաբթի,  
միջօրէին մօտ, հալասի հեռագրէ մը որ կը-  
սէր թէ «տիւնամիթի պայթում մը պատահե-  
ցաւ Պոլսոյ մէկ փողոցին մէջ, Մեծ-Եգիպտո-  
սի տալարանքին մօտ»: Յետոյ, Ռիդէր ման-  
րամասնեց իրողութիւնը, թէ պայթումը տեղի  
ունեցած էր ի Պապը Այի, թէ միւսեայն ատեն  
փորձ մըն ալ Ղալաթիոյ մէջ եղած էր՝ բայց  
անյաջող անցած, թէ երեք հայեր ձեռքադրու-  
ած էին իբրեւ հեղինակ այս յեղափոխա-  
կան գործին: Սոյն վերջին տեղեկութիւնը ա-  
մենէն աւելի դառն և յուզիչ տպաւորութիւն  
գործեց Եգիպտոսի հայ գաղթականութեան  
վրայ, ինչպէս անշուշտ այնպիսի ամեն կողմն  
ուր որ հայ մը կը գտնուի և կը կարեկցի իր  
թուրքիւններու եղբայրներուն վիճակին, ըմբռ-  
նելով անոր փափուկ ու վտանգալից հանգա-  
մանքը:

ԱՅՎԱԶՈՎՍԹԻ ՈՒԹՈՒՆԱՄԵԱԿԸ

Յուլիսի 17ին լրացաւ հռչակաւոր Յուլիսի Ի. Կ.  
Այսօրու ծննդեան 80րդ տարեդարձը: Մայրա-  
քաղաքներ և գլխաւորապէս Օգեսոյի լրագրողները  
համակրական յօդուածներ նուիրեցին Այսօրու ծննդ-  
գեղարուեստական գործունէութեան և տղայացիին  
նրա մանրամասն կենսագրութիւնը: Մի քանի ժա-  
մանակ առաջ Այսօրու ծննդի ուղարկեց Նիւյոյա քա-  
ղաքից 4 հատ պատկեր Մօսկայում հրատարակուող  
Նիւյոյա քաղաքի օգնութիւն Թիւրքիայում վնասված հա-  
յերին ժողովածուի խմբագրութեան ժողովածուի մէջ  
գետեղելու համար: Այդ պատկերները ահա թէ ինչ  
են ներկայացնում — «Թիւրքերը նոտայնում են  
հայերին շագենաւորի վրայ»: «Թիւրքերը թափում են  
հայերին Մարմարա ծովը»: «Նիւյի իջնելը Արարա-  
տից» և «Չովանում է»: Տարեդարձի օրը Այսօրու-  
քին ստացաւ բազմաթիւ շնորհակալական հեռագրե-  
րներ բարձրաստիճան անձերից: Թէպէտ քաղաքը  
մի առանձին պատգամաւորութեան ձեռքով ներ-  
կայացրեց նրան մի համակրական ուղերձ:

\* \* \*

ԳԱՆՔԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ

Թիւրքահայ մի քանի գաղթականներ սկիզբ են  
դրել ծխախոտագործութեան Գանձակի գաւառի Ոս-  
կապատ գիւղում: Գաղթականները անցեալ 1896  
թվին վերցրել էին տեղական կառավարութեան  
և գիւղացիներից հողը, խոտանալով արդիւնքը հա-  
ւասարակաւ կիսել: Առաջին տարուայ փորձը կա-  
տարեալ աջութիւն է ունեցել: Մօտ 10 դեռեա-  
տին տեղից ստացվել է մինչեւ 1500 լուրի, որի  
կէսը պարսկի համաձայն տրվել է գիւղացիներին:  
Այժմ Ոսկապատի գիւղացիներից շատերը վճռել  
են իրանց ջրարկի տեղերին մի մասը յատկացնել  
այդ բոյսին: Ոսկապատի ծխախոտը շատ աւելի  
գուրա գալիս, հոտաւէտ է և ծախվել պուրք 12  
լուրով: Ոսկապատին կից գիւղերի ժողովուրդը  
հետաքրքրված է այդ փորձերով և մտադիր է հետեւել  
Ոսկապատի օրինակին:

(Մշակ)

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Ռեժանակը, յեղափոխութեան այդ պեր-  
ճախօտութիւնը, նորեւ իր եղերական դերը  
կասարեց ի Պոլիս:

Արդիւնքը դեռ չէ որոշուած միևնույն այս  
պահուստ. շատեսն յոյսերով կը սիրենք օ-  
րօրուի միևնույն նորագոյն յուրերու հասնիլը.  
եւ այդ ակնկալութեամբ կը մաղթենք որ մեր  
ազգային վշտերու վրայ նոր կակիծներ չի  
գան քարոյի:

Տարին շատ կարճ ժամանակաւիցն էր  
և սպիացնելու համար այն վերջը գոր աւնց-



եայ օգոստոսին Պակ Ծօնականի պատահան-  
ներէն նետած ռումբերը բացին ամեն հա-  
յու արհիւ մէջ:

Այն պահուն ուր, անագորոյն գուգադի-  
պորեանք մը, օգոստոսի կեսին կը կրկ-  
նուի տինամիթին պայթումը, բնական է  
որ ներկային վրայ մտածած ասեմինս չի  
մոռնալ նաեւ անցեայ տարուան այն հա-  
յերը որոնք մտնալու մոլեռանդութեան մը  
եւ անշուշտ վրիժառութեան մը զոհ գացին:

Արձաններ կանգնեցնել անոնց յիշատակը  
յարեւոյթեցնելու համար, բարեգործական  
հասարակականներ հիմնեցին մեր կարողութե-  
ներէն վեր եւ մեր սովորութիւններէն դուրս  
բաներ եւ, հետեւաբար միմիայն յոր աղօթք  
մըն է զոր կրնանք նուիրել անոնց սիրելի  
եւ նուիրական յիշատակին:

Շնորհալի վեհախառնութեան մը յոբել-  
եանը տեսնելու համար երբ շաւրանեախառն  
պատարագներ կը մատուցանենք, որոնց ար-  
ձագանգը մինչեւ Սենթ Ճէյմսի դահլիճը չի  
հասար դժբաղդաբար, տեղը չէ՞ պատել որ  
մեր տեղական ազգային պաշտօնական մար-  
միներէն զմեզ եկեղեցի հրաշխեմ ի Գահի-  
րէ եւ Սպիտակաքիւղի, հոգեհանգստեան հան-  
դիսաւոր պատարագի մը՝ որուն ամեն  
հայ պիտի փութայ ներկայ գտնուիլ եւ ջերմ  
կերպով աղօթել իր նահապետ եղբայրներուն  
համար:

Տարակոյս չունիմք որ մեր այս առա-  
ջարկը սիրալիր ընդունելութիւն մը պիտի  
գտնէ Եգիպտոսի ազգ. պաշտօնական շրջանակ-  
ներու մէջ, որոնք անշուշտ մեզի պէս կը  
մտածեն եւ մեզի պէս կըզգան:

#### Կ. ՊՈԼՍՈՑ ԴԵՊԵՐ

Աւասիկ հինգշաբթիէն ի վեր յաջորդա-  
բար հասած հեռագիրները՝ Կ. Պոլսոյ մէջ ու-  
ժանակի պայթման դէպքին վրայ:

«Հալաս»ի գործակալութիւն

Կ. ՊՈԼԻՍ, 18 օգոստոս. — Ուժանակի պայթում  
մը տեղի ունեցաւ Պոլսոյ փողոցի մը մէջ, Մեծ-Ե-  
պարքոյի աստիճանին մօտ, քիմիկներ պատճառելով:  
Շփոթութիւն եւ խռովութիւն ծագեցան:

Կ. ՊՈԼԻՍ, 19 օգոստոս. — Պայթումէն՝ Դրոս  
չորս բարապաններ վիրաւորուեցան որոնց մէկը մե-  
ռաւ:

Հանգարտութիւնը վերահաստատուած է:

Բազմութիւն հայեր ձերբակալուեցան:

«Ռիւդեր»ի գործակալութիւն

Կ. ՊՈԼԻՍ, 19 օգոստոս. — Պայթում մը պա-  
տահեցաւ Դրոսը, Մեծ-Եպարքոյի պաշտօնատան  
ներքեւ. մարդ մը սպաննուեցաւ ու քանի մը հոգի  
վիրաւորուեցան. միեւնոյն ատեն Ղալաթիոյ մէջ  
եղած փորձ մը անյաջող եղաւ: Բազմութիւն ձերբա-  
կալութիւններ կատարուեցան:

Կ. ՊՈԼԻՍ, 19 օգոստոս. — Ռումիի արձակման  
գործին մէջ մատ ունեցող երեք անձերը հայ են.  
ոստիկանութիւնը փութով կը փնտռէ անոնց մեզ-  
ասակցները. սաստիկ գրգռութիւն կը տիրէ քաղաքին  
մէջ եւ պահակներ կը շրջին փողոցները:

#### ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԷՆ ԿԱՐԾԻՔԸ

Գահիրէի ու Ալեքսանդրիոյ եւրոպական  
թերթերէն ոմանք իրենց երէկի խմբագրական-  
ները նուիրած են Կ. Պոլսոյ դէպքին կամ ցոյ-  
ցին: Փառ Տ'Ալեքսանտրի կը գրէ իր «Գա-  
ղաքական կացութեան» գլուխը,

Օրուան հեռագիրները քանի մը մանրամասնու-  
թիւն կը բերեն մեզ՝ Մեծ-Եպարքոյի պաշտօնատան  
ներքեւ արձակուած ռումբին հետեւանքներուն վրայ:  
Չորս բարապաններ վիրաւորուեցին. անոնցմէ մէկը  
մեռաւ:

Թուրք հասարակութիւնը ընդհանրապէս վայր-  
կեան մը չի վարանեցաւ յայտարարելու թէ այս  
եղեւորական գործին հեղինակները Հայերն են եւ  
արգէն իսկ անոնցմէ շատեր ձերբակալուած են:

Ապահովագէտ այդքանով չափաւրաւանաւ  
եւ Կ. Պոլսոյ ոստիկանական զրույթները թիչ չատ դի-  
ցուի մը ներքեւ է հաստատուել որ թուրք կողմով  
թուրքներն ինք ստեղծած է այս միջոցէն, Հայերը  
վերադարձնելու հալածելու նոր պատրուակ մը ունենալու  
համար ի ձեռին: Եւ արդարեւ, երբեք ուրեք  
լուրին մը կը գտնէ այս բանին մէջ. Հայոց միա-  
ցեալ մասը ընտելնջ ընել, Տէրութեանց ուշադ-  
րութիւնը թեւալիայի վրայէն հեռացունել եւ ան-  
վերջ կերպով յետաձգել բարենորոգումներու ողջ-  
բնաւորութիւնը:

\* \* \*

Լա Ռեֆօռմ աւելի ընդարձակ տեսու-  
թիւն մը գրած է ուր կը պարզէ թէ արդի  
պարագաներուն մէջ ի՞նչ ծանր հետեւանք  
կրնայ ունենալ ռումբի մը պայթումը:

«Հրդեհներու լոյսը, սպաննուողներու ճի-  
շերը, հրացանաձգութեան եւ ուժանակի ձայ-  
ները՝ հաշտութեան համար կատաղուող բա-  
նակցութիւնները խանգարելու բնութիւն ու-  
նին:

«Վերջին ժամանակներս ձերբակալու-  
թիւնները բազմապատկուեցան ինչպէս քիւ-  
տանեայներուն նոյնպէս իսլամներուն մէջ: Ան-  
գլխական թերթ մը կը ծանուցանէր թէ  
1620 իսլամներ բանտ նետուած են, իբրեւ  
կասկածելի՝ ժէճ-Թիւրքի կողակցութեան  
պատկանող: Զինուորական տեսան մը կազ-  
մուած է զանազան դատերու համար:

«Կարգը հայերուն պիտի դարձայ. ասի կան-  
խատեսուած էր: Ուրեմն դաւադրութիւն մը  
կայ բարեկարգութեան կողակցներուն կողմէ,  
եւ դաւադրութիւն մը՝ հայերուն կողմէ:

«Զապուտի միջոցները պիտի տարբերին քիչ  
մը, վասն զի երկուստեք թուրքերը կրնան  
զեռ ներում գտնել, վկայ Մուրատ պէյին  
պատմութիւնը, — Միզանի խմբագիրը որ Պո-  
լիս կը գառնայ Սուլթանին հրաւերով: Հայե-  
րուն նկատմամբ աւելի կտրուկ պիտի ըլլան  
եւ միջոցը պիտի գտնեն ժողովուրդ ամեն  
անոնք որ կասկածելի են եւ անոնք որ կը  
մատնուին: Ո՞վ կրնայ երբէք ըսել թէ որքա՞ն  
հայեր պիտի բանտարկուին եւ անոնցմէ քա-  
նի՞ն պիտի տեսնեն օրուան լոյսը»:

Յիշելէ յետոյ Չարին ու Վիլհէլմ Բ.ի  
վերջին բաժակաճառերն ու յայտարարութիւն-  
ները, մեր ֆրանսացի պաշտօնակիցը կը հար-  
ցունէ թէ երկու կայսրերը վայրկեան մը իսկ  
խորհեցա՞ն արդեօք այն ահաւելի կացութեան  
վրայ որուն կենթարկուին հայերը: Ի՞նչ յոյս  
կը մնայ այդ դժբաղդ ազգին: Պատերազմը  
հազիւ վերջացած, հալածանքները կը վերը-  
կըսին անոնց դէմ: Մարդու մտքէ չէր անցնէր  
այս բան. եւ ահա՛ դաւադրութիւններ երե-  
ւան կեղծն ու ռումբեր կը պայթին: Գահիրէ մը  
օրէն միայն պիտի իմանանք թէ ի՞նչ զոհողու-  
թիւններով ձեռք բերուած է հանգարտու-  
թեան վերահաստատումը:

«Կըսուի թէ հայեր պայթեցուցած են  
ռումբը: Շատ հաւանական է այս եւ մենք  
մեզի կը հարցունենք թէ ի՞նչ յոյս կրնան ու-

նեցած ըլլալ այդ մարդիկ որոնք գիտեն թէ  
ուշ կամ կանուխ պիտի բանտարկուին, կամ  
արտաքսուին երկրէն եւ կամ սպաննուին»:

Եղբակացութիւն. խաղաղութիւնը, զոր  
Գերմանիոյ կայսրը խոստացաւ տիրել տալ  
երկրիս վրայ, նոյն իսկ բռնութեամբ, չի պի-  
տի ապահովուի բնաւ, որքան ատեն որ թուր-  
քիոյ արդի դրութիւնը չի բարեփոխուի:

Թուրքիա յաղթական է, իրաւ. բայց  
թաղութիւն չի պիտի գտնէ բնաւ Մարդկու-  
թեան եւ Պատմութեան առջեւ:

\* \* \*

Արաբական Էջ-Մուայէաս լրագրին տե-  
ղեկութիւններուն նայելով, դէպքին օրը չի ու-  
թութիւններ ծագեր են զինուորական վար-  
ժարանին մէջ, ուսանողներուն կողմէ որոնք  
թեւալիային թուրքիոյ կցուիլը կը պահանջեն  
եղեր: Վարժարանը հեծեւազօրաց շղթայի մը  
մէջ առնուել է:

\* \* \*

Այսօր, մինչեւ կէս օր, թէ՛ Կ. Պոլսէն  
եւ թէ՛ եւրոպական մայրաքաղաքներէ հասած  
հեռագիրները ո՞ր եւ է տեղեկութիւն չեն  
պարունակեր ուժանակի դէպքին ու անոր հե-  
տեւանքներուն վրայ: Կը սիրենք յուսալ թէ  
հեռագրական գործակալութեանց այս լու-  
թիւնը բարենշան ըլլայ, եւ թէ՛ հինգշաբթիէն  
ի վեր արտայայտուած յուսահա գուշակու-  
թիւններն ու տխուր բնազդումները անհիմն  
եղին:

#### ԹՈՒՐԲԵՒՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԻՒՆ ՎՐԱՅ

Դաւրէժէն օգոստոս 12 թուականաւ կը  
հեռագրեն Տէյրի Նիւրին:

«Պարսկական զօրքեր որոնք սահմանա-  
գլխի գիւղերն արշակող քիւրտերուն դէմ  
խրկուած էին, յաղթեցին անոնց՝ բուն ճա-  
կատամարտէ մը ետք: Քիւրտերը վեց մեռ-  
եալ ունեցան. սահմանագլուխէն ետ դար-  
ձան: Հայ ապստամբներ կռուեցան քիւրտե-  
րուն դէմ: Վանի նահանգին մէջ բազմաթիւ  
կորուստներ ունեցան: Հայերը կը պատրաս-  
տուին վերստին կռուելու»:

Միւս կողմէ, Կ. Պոլսէն կը հեռագրեն,  
տաճկական աղբիւրէ:

«Թուրքեւպարսկական սահմանագլխի մի-  
ջադէպին առթիւ կը պատմուի Բ. Դրան մէջ  
թէ 738 հայեր, ռուս սպայներու հրամանա-  
տարութեան տակ, Վանայ նահանգին Մէրի-  
քի գիւղը մտեր եւ 296 հոգի խողխողեր են,  
որոնց մէջ տղաքներ ու կիներ կային. այս  
վերջիններուն ստիկները կարեր են: Զանոնք  
հալածելու համար զրկուած երկու վաշտեր  
58 հայ սպաններ են. միւսները Պարսկաս-  
տան փախան: Այժմ, տաճկերկու վաշտ օսմ  
զինուոր դրուած են սահմանագլուխը»:

\* \* \*

Ռիւդերի գործակալութիւնն այս առա-  
ւօտ հետեւեալ հեռագիրը կը հաղորդէ Լոն-  
տոնէն.

«Դաւրէժէն առնուած լուրերու նայելով,  
քիւրտերը արշաւանք մը կատարեր են դէպ ի



Սարմատ , պարսկական սահմանադրւիւն վը-  
րայ , երկու հայաբնակ գիւղ աւերելով և 200  
հոգի սպանելով , թէ՛ հայ և թէ՛ մահմե-  
տական :

## ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Քաղաքական ժողովն գումարուեցաւ ե-  
րէկ Առաջնորդարանի մէջ , նախագահութեամբ  
Առաջն. Տեղապահ Տ. Յակոբ Աշոտ Մ. վար-  
դապետի և զբաղեցաւ իր օրակարգին վրայ  
գտնուած խնդիրներով :

Առաջնորդարանի գիւնդատուէն հետե-  
ւաքն հաղորդուած է մեզ ի հրատարակու-  
թիւն .

Գաւառիս Ընդհ. Ժողովը որոշած ըլլալով որ  
յետ այսու յանուն վարժարանի և ուղեւորաց նախ-  
ընտել և կոսիեալ կառուածոց հասցիներն տարող-  
ջովին յատկանան վարժարանի և ուղեւորաց , և  
նկատելով որ այս որոշում գործադրուած ժամա-  
նակ ազգային միւս հասցիները չի պիտի բաւարար-  
նանան ազգային միւս պէտքերուն , մանաւանդ Ս. Ն.-  
կեղեցւոյ , որ բնաւ կաշտած չունի , որոշած է նաեւ  
որ հասցի չորս ազգիւր մը տեղիւն համար ազ-  
գային տուրք հաստատուի և այստեղ , ազգային  
տուրքը հիմ պիտի ըլլայ ընտրողական իրաւունց և  
բաժնուած է չորս աստիճաններու , Ա. ըստ հաճոյս ,  
Բ. 75, Գ. 50, Դ. 25 դր. ողջ և պիտի գանձուի  
25 տարին լրացնող այն արու ազգայիններէն որ  
ընդի են կամ ընտանեօր երեք և ասանց ընտա-  
նիքի հինգ տարին ի վեր հաւ հաստատուած են և  
տէր են վաստակի և չափ :

Քաղաքական ժողովը իր երկի նկատին մէջ  
Արժ. Տ. Մարտի և Տ. Եղիկի Բաժնաւորներն և  
Պաշտօնական Միւսեր , Տ. Արտաւան Կարապետ և  
Բարտեան Թովմաս Էֆէնտիներէ լազկացեալ ցանձ-  
նապաշտ մը կազմեց , պաշտօնով որ արդէն ծա-  
նուցեալ և աւարտելու վրայ եղող մարդահամարի  
յուշակներէն բաղկեալ պատրաստ , ազգ. տուրքի  
մասնակցելու վիճակ ունեցող ազգայնոց ցանկը և  
որոշէ իւրաքանչիւր անհատի կարողութեան աստի-  
ճանը :

## ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Բարձր. Խտիվն այսօր իր ներկայութեան  
կընդունի անդի գիւնդատուական գործա-  
կատարի փոխանորդը , Պ. Ռենէլ Ռոտ որուն  
կընկերանայ Թէքի դուքսը Այս վերջինը , քիչ  
օրէն Սուտան կուղեւորի , պատերազմին մաս-  
նակցելու :

Պողոս փաշա Նուպար , որ արձակուր-  
դով Զուիցերիա կը գտնուի , զգալապէս կազ-  
դուրուած է այս օգնութիւններէն և նոյնմե-  
րի սկիզբը եղիպտոս պիտի դառնայ՝ երկա-  
թուղոյ վարչական խորհուրդի անգամակցու-  
թեան պաշտօնը վարելու :

Եգիպտոսի անգլիական զբաղիչ բա-  
նակին հրամանատար կարգուած է Կրէնֆել  
փաշա , Մաթօր-ժէնէրալ Նոուրի տեղ որ  
հանգստեան կոչուելով Լոնտոն ուղեւորեցաւ :

Եգիպտական երկաթուղիի տոմսերու  
հաշիւէն կերեւայ որ 36,363 հոգի գացած  
են Թանթաի տօնավաճառը : Անցեալ տարի ,  
այցելուներուն թիւը 42,016 էր :

Բուէնս Հիւսէյին փաշա Բամել երէկ  
Մարտիկոյ ճամբով Եւրոպա ուղեւորեցաւ օգ-  
նութիւններ համար :

Նախընթաց օր Բոս-Սայիտի շուկային  
մէջ տեղացիները հայհոյանքներով ու բռնուց-  
քի հարուածներով յարձակեցան եւրոպացիի

մը վրայ որ գացած էր իր փոքր մէկ պահանջ-  
քը ուղեւոր արաբէ մը : Մարդը , սանակով  
եղած , թէեւ փորձեց զբաւանէն բէկովէնը  
հանելով պաշտպանել ինքզինքը , բայց չի յա-  
ջուցաւ , իր վրայ տեղացի հարուածներն  
այնքան շատ էին ու արագ : Ոստիկանութիւնը  
քանի մը ձեռնակալութիւններ կատարեց : Եւ-  
րոպացին հիւանդանոց փոխադրուած է :

Ազգ. քաղաքական ժողովն կը գրեն Բնօրէնին  
թէ քանի մը վաշտ անգլիական զօրքերու ժա-  
մանման լուրը գործնականութիւն պատճառներ  
է քաղաքին օտար գաղութներուն որոնք  
կը վախեն որ ընդի ժողովուրդը մի՛ գուցէ  
ծայրացեղութիւններու դիմէ , վասնզի անընդ-  
հատ անոր մղեւորութիւնը գրգռողներ կան :

Մուսսուսաւ կը հաղորդէ թէ կառա-  
վարութիւնն հրամայած է քննութիւն մը կա-  
տարել վերջին օրեր ֆէյսալի մէջ պատահած  
դէպքերուն վրայ : Ֆրանչիսկեան կրօնաւորի  
մը յուզարկաւորութեան պահուն , տեղացիք  
թափուրին վրայ յարձակելու անարգել էին  
յուզարկաւորները :

Մեր ընդերքայիններուն ուշադրութիւնը կը հրա-  
ւիրենք այս օրուան չորրորդ երեսին մէջ՝ դրոտած  
Զուրիկ Օշլուի ծանուցման վրայ :

### ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մատրիտէն Հեռագիր մը կը հաղորդէ թէ Սպա-  
նիոյ նախարարապետ Քանովաս ալ Բասթիլլոյ ըս-  
պանիչը՝ Անճոլիթթօ , գլխատուել է երէկ :

\* \* \*

Կ. Պաշէն հասած Հեռագրի մը նայելով , Օսմ.  
Պանրան առաջարկեց է մէկ միլիոն օսմ. ոսկիի փո-  
խատուութիւն ընդ՝ Յունաստանի վճարելիք պատե-  
րազմական տուգանքի առաջին մասնավճարին ի  
հաշիւ :

\* \* \*

Լոնտոնէն , Հալիսի գործակալութիւնը կը հե-  
ռագրէ թէ Հնդկաստանի ժողովուրդին ընդհանուր  
անգլիական վարչութեան գէմ՝ այլեւս զսպուած  
կընայ նկատուի :

### ՀՈՍԿԵ ՀՈՆԿԵ

ՔԱՌՆՈՅԻՆ ՊԷՍ

Բարիգեան քեր մը հետեւեալ ծանկեալ մասը  
հաղած է Անճիօլիթթօյի՝ Բանօլսի սպ սնիչին հա-  
ցանկութեան :

Դատաւորը , առանց ո և է բռնութիւն բռնե-  
ցունելու , և քաղաքական վիճարկութիւն մը ընելու  
ձեւով Անճիօլիթթօյի կը բացատրէր պաշտպան եւ  
հանգարտ կերպով , անիշխանականներու բռնած ըն-  
թացքին անօգուտ ըլլալը :

Այդ ոճիւնները երբէր չեն ծառայած ձեր գա-  
տին Պետական նշանաւոր անձնաւորութիւն մը ըս-  
պանեցիք , բայց ուրիշ մը անոր պիտի յաջորդէ :  
Մարդ մըն է որ կանհեղատանց և ոչ կատարական  
գրութիւն մը (régime) :

Քանի մը վայրկեան եւս գաւառորդ այս ձեւով  
խօսքը շարունակեց , մարդասպանը շփոթած և քիչ  
մըն ալ զայրացած կերեւար , սակայն միւս կողմէ գոհ  
ըլլալու էր որ իր սպրտած կերպով չէին չարչարել  
զինքը :

Բանտը բերուած միջոցին Անճիօլիթթօ սապէս  
խօսած էր բանտապետին :

Իմ տանջանքներս հիմա կսկսին . բայց հոգ  
չէ , ամեն ինչ առաւ եմ : Գիտեմ ուրիշները  
ինչեք քաշած են հոս , միեւնոյնը պիտի ըլլայ նաեւ  
ինծի համար : Ինչ կուզեն թող ընեն , բաւական է  
որ ես նպատակահարմար :

Հետեւեալ չէր սպասել որ ատանկ մեզմ  
հարցաքննութեան մը երթարկէին զինքը , և յայտ-  
նապէս դժգոհ էր տեսնելով որ գաւառորդ գործ-

ուած սնիչին հետեւանքներուն վրայ բոլոր մը ան-  
գամ չէր ըսել իրեն :

Իւ երբ գաւառորդ նորէն կը կրկնէր թէ մար-  
դիկ կրնան փոխուիլ՝ լայն տէրութեան օրէնքները  
անփոփոխ կը մնան :

Հըմ , հըմ , կը կարծէք , պատասխանեց Ան-  
ժօլիթթօ , այդպէս կարելի էր ըլլալ եթէ ոճիւնե-  
րը ուրիշ ուրիշ գործուէին , բայց այդպէս չէ , ա-  
տանկ գէպքեր դեռ շատ պիտի տեսնար և ժամա-  
նակ մը պիտի գայ որ ա՛լ հերթը է պիտի ըսէք ,  
դեռ կայեցեք տեսներ :

Հիմայ կարգը Ֆելիքս Ֆոլինն է . այդ . . . ալ  
Քանովաս բով պիտի զրկենք :

Ինչպէս կը տեսնեմ , հսկողութեան մը նա-  
խագահ ըլլալը կարծուածին չափ հաճելի աբիւտս  
մը չէ :

ՄԻԱՍՏՈՒԹԻՒՆԸ ՈՒՐ ԿՐԵԱՅ ՀԱՍՆԻԼ

Պէրութէն Ֆար և Ալեքսանտրիի զրկուած թըղ-  
թակցութեան մը մէջ հետեւող տղերքը կը կարգանք :  
« Հորանի խնդրոյն տաթիւ , չէյիսի մը տանը  
մէջ օրուան լուրերու ն վրայ կը խառնէր և առա-  
սիկ ինչ ըսին ինծի . — Տաճկական նաւատորմի  
անգլիական նաւատորմը չըջնապատեալ գրոհուոր  
մը գրաւեց որուն վրայ միւրեք լեռնաշղթա էր Հօ-  
րան զրկուելու համար :  
Այսքան միամտութիւն . . . »

ՖԲԱՆՍԱՆ . . . ԻՍԼԱՄԱՅԱՍ

Պէրութի տեղեւ խարոսած Ֆրանսական Վօ-  
րուր պաշտօնաւոր , Մարդարէին ծննդեան օրը (անց-  
եալ չորեքշաբթի) զրօշակներով զարդարել է իր կայ-  
մերը :

Վօրուրի սպաններուն այս տաճկասիրական ե-  
տանգը զարմացուցած է Պէրութի եւրոպական գա-  
ղութները :

Առաջին անգամն է որ թուրքերու կրօնական  
մէկ տոնին տաթիւ եւրոպական մարտանաւ մը այս-  
պիսի խրախմանքներ կը կատարէ :

Դեռ ինչե՞ր պիտի տեսներ արդեօք :

ՇԱՀԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ի Գ. Ա. Հ. Ի. Բ. Ե.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Շահ. Ընկերութեան պատուարժան անդամ  
կ'ձանուցուի որ ընկերութեան սեփականութիւն կազ-  
մող 50 Բումէլիի երկրորդուց պարտատոմսերէն  
թիւ 984,747ը վերջին՝ այն է 165,00 վիճակահա-  
նութեան շահած է 400 ֆրանք մայր գումարը :

Ըստ որոշման Ընդհ. Ժողովոյ՝ կ'յայտարարուի  
նաեւ արգոյ բաժնետէտաց որ հաճին իրենց յետեւող  
բաժնեգրներն վճարել մինչեւ առաջիկայ 97 սեպ-  
տեմբ. հսկողական պարագային կոնստանդուլ 30,00 յօդու-  
ուածի տրամադրութիւնը անհրաժեշտագոյն պիտի  
գործադրուի չվճարող անդամաց մասին : Այս տաթիւ  
կ'փութանք ծանուցանել թէ Ընկերութեան Գան-  
ձապետն Մեծ. Գրիգոր էֆ. Պաշտօնական տան օր  
կ'գտնուի Մեծ. Բալհանէս էֆ. Պաշտօնական խա-  
նութիւն ի Մուսթի տը կրնան դիմել իրենց վճարու-  
ման բնեւ :

Ի զիմայ Տիւրքի ժողովոյ Շահ. ընկ.  
Ասեմաղալիւր Ասեմաղալես  
Կ. ՇԱՀԱՍՏԱՐԻՒՆ Ա. Կ. ԱՅՏԱՆ

### ԴԵՊԻՎԵՐ

Ինչպէս աշխարհները արհեստական ոսկին կը  
փնտռեն և չեն գտնել , նոյնպէս շատ մը գիտնա-  
կաններ և աշխարհագրական հիւսիսային բեւեռ  
գտնել փորձած են և չեն յաջողած : Յիսուս տա-  
րիկ ի վեր շարունակ ամեն օր եւրոպական թեր-  
թերու մէջ կը կարգանք նորանոր փորձերու նկա-  
րագրութիւնը , սակայն , առաջ , մինչեւ այսօր ոչ ոք  
հասած է հոն և շատեր իրենց կենքը վրայ տուած  
են առանց օգուտ մը ընծայելու գիտնական աշխարհին  
հետաքրքրութեան :

Այս անգամ Պ. Անտրէն է որ այդ զժողովին



Համարողութիւնը կատարելու կելլէ օգտաւարիկով :  
Անորէ՛ Գունիս 30ին , երկու ընկերներով ճամբայ ելաւ ի խնդիր հիւսիսային բեւեռին :  
Գիտութեան այդ երեք ֆեսալիները Սոյն-պէրկ կողմէն մեկնեցան և թռան գային դէպի հիւսիսային բեւեռ : Պ. Անորէ մեծ հաւատարմութեամբ ձեռնարկեցին իր ձեռնարկութեան վրայ, եթէ երբէր հաւատարմութեամբ որ այժմ այդ կողմերը կը փչէ, շարունակէ տեսել մինչեւ քառասուն օր :  
Բեւեռայինը ճանապարհորդին հաշիւը զիտ-նականորէն ճիշդ կրնայ ըլլալ կըսեն ուրիշներ, եթէ իրաւ հաւատարմութեամբ միշտ իր ետին ունենայ, բայց ասիկայ անհատաւոր կը թուի իրենց, որովհետեւ շատ մը փորձերով տեսնուած է թէ որքան որ բեւեռին մոտեցաւ, օդը այնքան փոփոխական կըլլայ, մասնաւոր Յօշիս ասոյ մէջ կարելի չէ յուսալ որ անփոփոխ հով մը գտնուի :

Պ. Անորէ յուսահատելու միտք չունի . որոշած է աչքովը բեւեռը տեսնել և զիտական այդ եւն թաղրութիւնները զինքը կատեցնելու ընթերցան չունին :

Բայց խնդիր է գիտնալ թէ, նոյն խի եթէ իրեն կարելի ըլլայ հասնիլ մինչեւ բեւեռ, պիտի կրնայ ճշգրիտ գաղափար մը ունենալ իր տեսածին վրայ : Պէտք է յիշել թէ Պ. Անորէ իր օգտաւարիկէն վար չպիտի լքէ երբէր և իր ուսումնասիրութիւնը պիտի կատարէ վերէն, սակայն գիտնականորէն հաստատուած է որ երկրագունդին այդ կէտը միշտ միշտ մէջ թաղուած ըլլալով կարելի չէ մտնել տեսնել այն ցամաքները և կամ ջուրերը որոնք բեւեռը կը կազմեն :

Հաւանական է որ օրուան մարդը հիւսիսային բեւեռը հասնի և բան մը չի տեսած ետ դառնայ : Միթէ շատեր չուն գոյած չեն առանց Լեւոն երեքսաններորդի երեսը տեսնելու :

Մաղթելու է սակայն որ իրական խիւլ Վէնիին փորձը յաջողութեամբ պատուի և այդ անձանթի կէտին գաղտնիքը երեսն ելլայ :

Անգամ մը որ Պ. Անորէ հիւսիսային բեւեռը գտնէ, Սան-Սթեֆանայի Լուիսին զիտաւորութիւն ունի քաղին մը հաստատել հոն, նուիրելու համար Միջազգային դատարաններու անդամներուն . . . մէկ նոր ամարանդի մը հրապոյրը :

Ա Ձ Դ

Տիկին Սոֆիկ Ազգապետեան, մանկաբարձ, վկայեալ կայսերական վարժարանէն, այժմ բնակութիւնը Գա. հիւր հաստատած ըլլալով, պատիւ ունի ծանուցաւնել հայ հաշարակութեան որ պատրաստ է իր խնամքները տալ իրեն պէտք ունեցողներուն :

Իւ երկարամեակեալ փորձառութիւնը և խրդնամիս աշխատութիւնը զինքը հազախա առաջնաւարդ մանկաբարձերու կարգը կանցընեն :

Իրմել Շուպրա, Չամաւի փողոց թիւ 12: Երկուշաբթի և հինգշաբթի օրերը առաւօտուն կը զբոսնի Սարաֆեան դեղատանը ի Պեն-Էլ-Սուրէն :

ԴԻԻՐՈՒԹԻՒՆ, ԴԻԻՐՈՒԹԻՒՆ, ԴԻԻՐՈՒԹԻՒՆ

Ասորագրեալ պատիւ ունի ծանուցանելու թէ պատրաստ եմ դիւրամսջելի տկոսով փոխառուութիւն ընել մեր հայ գաղթականներուն որոնք գրաւ իր ձեռնին դժուարութեան կը հանդիպին խղճամիտ սահման մը գտնելու :

Խանութիւն մէջ կը վաճառուին նաեւ տեղական վիճակահանութեանց տոմսեր, ամսական վճարումներով :

Ս. ԶՈՒՐԻԿ ՕՂԼՈՒ  
Շարա Ապս-Էլ-Ազիզ, քաւորին կից

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, սամոնի, մորթի և ջրային հիւանդութեանց : Կ'ընդունի իրեն զխնդ հիւանդները Մեզոն Զահար, Շեքիւրս Զօրէի հիւր դէմը . ամեն օր առաւօտուն ժամը 10ին 12 և կէս օրէն վերջ 3ին 5: Բոլոր վկայեալ աղբաւք ձրի կը դարմանուին :

Le Gérant: HENRY SAKAKINI  
Տպագրութիւն ՓԱՐՈՍ րազրի

ԴՐԱՄԱՏՈՒՆ  
ԱԼԵՔՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱՂՈՂԼՈՒ  
Գ Ա Ղ Ի Բ Է

Գնում և վաճառում ալ թէ իմ ուղիք երբեք .  
Կանխագնար արժեք իմ երաւ վրայ .  
Ճնէ յաճախորդներու հաշիւին համար գան-  
ձումներ ընել եղիպտոսի և արտասահմանի  
զիւսուոր քաղաքներու մէջ .  
Պայմանաւորումս  
Երբ վաճառում ամեն տեսակ պարզեւաւոր  
արժեք իմ ուղիք երբեք, օրինաւոր պայմաններով :  
Աւելի մանրամասն տեղեկութեանց համար զի-  
մեկ Պուլսը փողոց Եղիպտոսիան հետազոտարան զէմ  
Բէմաւորը զրամատուներ :

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ  
ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒՍՅԱՐԱՐ

Իօղպէրիէ Պիւլպիւլեանի օթէլին քոյրն-  
տի կամարակալ փողոցը բացած խանութիւն  
մէջ ամենէն դժուարահաճները գոհացնելու  
եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն աւ-  
վորական գիներով :

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՅ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷԻ ԱՂԵՔՍԱՆՏՐԻՈՅ ԳԻԾ

| Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք | Ժամանակ    | Երկուրդ | Կէս ուղ | Օրնիւր  | Երբորէս | Օրնիւր  | Երբորէս | Օրնիւր  | Երբորէս    |
|-----------------|------------|---------|---------|---------|---------|---------|---------|---------|------------|
|                 | 1,2,3,4    | 1,2,3,4 | 1,2,3,4 | 1,2,3,4 | 1, 2 4  | 1,2,3,4 | 1, 2 4  | 1 2 3 4 | 1 2 3 4    |
| Գահիրէ          | մեկ. 4 45  | —       | 7 —     | 8 15    | 9 30    | 3 30    | 4 45    | 7 15    | 11 —       |
| Պէնհա           | » 8 —      | —       | 7 49    | 9 32    | 10 15   | 4 47    | 5 29    | 8 32    | աւտ. 12 35 |
| Թանիս           | » 11 28    | —       | 8 30    | 10 30   | 10 55   | 5 45    | 6 7     | 9 30    | 1 44       |
|                 | մեկ. 11 48 | 6 —     | 8 34    | 11 15   | 11 —    | 6 26    | 6 11    | —       | 1 54       |
| Տամանհուր       | » 3 10     | 7 34    | 9 41    | 12 49   | 11 58   | 7 59    | 7 7     | —       | 3 51       |
| Աղեքսանդրիա     | » 6 25     | 9 15    | 10 45   | 2 30    | 1 —     | 9 40    | 8 7     | —       | 5 50       |

ԱՂԵՔՍԱՆՏՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԾ

| Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք | Օրնիւր    | Կէս ուղ | Օրնիւր  | Երբորէս | Ժամանակ | Օրնիւր | Երբորէս | Օրնիւր  | Երբորէս    |
|-----------------|-----------|---------|---------|---------|---------|--------|---------|---------|------------|
|                 | 1,2,3,4   | 1,2,3,4 | 1,2,3,4 | 1 2 4   | 1,2,3,4 | 1 2 4  | 1 2 4   | 1 2 3 4 | 1 2 3 4    |
| Աղեքսանդրիա     | մեկ. —    | 7 —     | 7 15    | 9 —     | 9 20    | 2 30   | 4 15    | 6 15    | երեկ. 11 — |
| Տամանհուր       | » —       | 8 6     | 8 58    | 10 2    | 12 14   | 4 13   | 5 15    | 8 6     | աւտ. 1 9   |
| Թանիս           | » —       | 9 12    | 10 28   | 11 —    | 2 39    | 5 43   | 6 10    | 9 40    | 2 56       |
|                 | մեկ. 6 15 | 9 16    | 11 20   | 11 5    | 2 49    | 6 30   | 6 14    | —       | 3 6        |
| Պէնհա           | մեկ. 7 18 | 9 59    | 12 23   | 11 46   | 4 43    | 7 33   | 6 52    | —       | —          |
| Գահիրէ          | » 8 30    | 10 45   | 1 35    | 12 30   | 6 25    | 8 45   | 7 35    | —       | 4 25       |

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

| ԿԱՅԱՐԱՆՔ      | ԱՌԱՌՈՏ     | ԵՐԵԿՈՅ | ԿԱՅԱՐԱՆՔ      | ԱՌԱՌՈՏ    | ԵՐԵԿՈՅ |
|---------------|------------|--------|---------------|-----------|--------|
| Գահիրէ        | մեկ. 11 40 | 7 —    | Սիւէզ (բարափ) | մեկ. 9 50 | —      |
| Պէնհա         | » 12 28    | 7 48   | » կայարան     | » —       | 3 30   |
|               | մեկ. 12 33 | 7 53   | Իսմաիլիա      | » 1 20    | 7 5    |
| Զակազիկ       | » 1 34     | 8 54   | Զակազիկ       | » 3 7     | 8 53   |
|               | մեկ. 1 44  | 9 4    |               | մեկ. 3 17 | 9 3    |
| Իսմաիլիա      | մեկ. 3 40  | 1 —    | Պէնհա         | » 4 13    | 9 47   |
| Սիւէզ կայարան | » —        | 5 —    |               | մեկ. 4 17 | 9 4    |
| Տօք (բարափ)   | » 6 55     | —      | Գահիրէ        | » 5 5     | 10 35  |